ԿԱՐԾԻՔ

Հրաչյա Արսենի Դանիելյանի «Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման հիմնախնդիրները» թեմայով, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը

Հրաչյա Արսենի Դանիելյանի «Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը վիրված է ներկա փուլում ֆինանսական կառավարման ամենաառանցքային ուղղություններից մեկին՝ Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերին և կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման հիմնախնդիրներին:

Տնտեսավարման արդի պայմաններում կարևորվում է էլեկտրոնային վճարահաշվարկային գործարքների արդյունավետության գնահատումը՝ հիմնված ոլորտի շահառուների պահանջմունքների բավարարման աստիճանի վրա: Առավել ևս արդիական է համարվում այդ ուղղությամբ հաշվետվողականության ապահովումը: Սակայն, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության հաշվետվողականությունը նպատակաուղղվում է առավելապես ֆինանսական կառավարման վերահսկողական գործառույթներին, և բնավ չի ներկայացնում ոլորտի մրցակցային միջավայրը:

Վիրտուալ միջավայրում վաճարահաշվարկային գործարքների իրականացումը ձևավորում է առանձնահատուկ ռիսկեր, կապված ոչ միայն կիբեռանվտանգության ապահովման, այլև գործարքների ֆինանսական կառավարման հետ: Հատկապես, ներկայումս կարևորվում են քարտային ծառայությունների ծածկույթի, վճարային գործարքների ֆինանսական պաշարների ապահովվածության, ֆինանսական կազմակերպությունների կապիտալի համարժեքության ռիսկերը, որոնք կառավարման

առանձնահատուկ մոտեցումներ են պահանջում և դրանց գծով իրականացվում են օպերատիվ կառավարչական որոշումներ:

Վերջին տասնամյակում, կենտրոնացված կարգով էլեկտրոնային վճարային համակարգերի գործունեությանը զուգահեռ, ֆինանսական շուկայում ակտիվ գործունեություն են ծավալում կրիպտոարժույթները, որոնք կառավարվում են բլոքչեյն համակարգում՝ ապակենտրոնացվան սկզբունքով: Աստիճանաբար ձևավորվում է մի իրավիճակ, երբ կրիպտոարժույթների էմիսիան և շրջանառության ծավալումը իրենց ազդեցությունն են թողնում կենտրոնական բանկի կողմից իրականացվող էլեկտրոնային փողի զանգվածի փոփոխությունների վրա: Այս առումով, արդիական է համարվում նաև կրիպտոարժույթների շրջանառության ֆինանսական կառավարման բարելավման ուղիների ներկայացումը: Այսպիսով, ատենախոսի կողմից բացահայտված հիմնախնդիրները ամրագրում և փաստում են հետազոտության թեմայի կարևորությունը և արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան

Գրախոսվող ատենախոսության նպատակն է մշակել էլեկտրոնային վճարա-հաշվարկային համակարգերի ֆինանսական կառավարման մոտեցումների բարելավման գիտական ուղղություններ: Ելնելով հետազոտության նպատակից, ատենախոսի կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. վերլուծել էլեկտրոնային վճարման գործիքակազմի ընդլայնման շարժառիթները և զարգացման միտումները ոչ միայն ազգային, այլև միջազգային հարթություններում,
2. ներկայացնել վճարահաշվարկային համակարգի ֆինանսական վերահսկողության և հաշվետվողականության բարելավման մոտեցումներ, որոնք ձևավորվում են ոլորտի շահառուների սպասումներով,

3. մշակել էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի գործունեության ֆինանսական ռիսկերի կառավարման այնպիսի մոտեցումներ, որոնք հիմնված կլինեն ռիսկերի բազմագործոնային չափման միասնական համակարգի վրա,

4. վերլուծել կրիպտոարժույթների շրջանառության և պետական վերահսկողության շրջանակներում գտվնող էլեկտրոնային փողերի թողարկման գործընթացների փոխազդեցության շրջանակը,

5. ներկայացնել առաջարկություններ փողի զանգվածի որոշման բարելավումների ուղղությամբ, որոնք հաշվի կառնեն կրիպտոարժույթների ապակենտրոնացված շրջանառությունը,

6. առաջարկել տնտեսության կրիպտոլիզացիայի վերահսկողության մոտեցումներ, հաշվի առնելով փողի զանգվածում կրիպտոարժեքների ընդունելի ցուցիչներ և էլեկտրոնային փողերի շրջանառության արդյունավետության ուղիներ:

Ըստ ատենախոսի հետազոտության օբյեկտ է հանդիսացել ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգը, ինչպես նաև կրիպտոարժույթի շուկան՝ իրենց ֆինանսական գործառույթների շրջանակով: ***Հետազոտության առարկան՝*** ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի ֆինանսական կառավարման գործընթացն է:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ատենախոսը ներկայացրել է հետևյալ դրույթները.

1. մշակվել են էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի գործունեության ֆինանսական ռիսկերի գնահատման մոտեցումեր կիրառելով ռիսկային գործոնների չափելիության միասնական համակարգ և շահառուների նպա-

տակադրումներից հավանական կորուստների որոշման համապարփակ ցուցանիշներ,

2. Էլեկտրոնային վճարման գործիքակազմի ընդլայնման շարժառիթների և զարգացման միտումների ուսումնասիրության հիման վրա առաջարկվել են վճարահաշվարկային համակարգի ֆինանսական վերահսկողության և հաշվետվողականության բարելավման մոտեցումներ հիմնված ոլորտի շահառուների պահանջմունքների բավարարվածության աստիճանի վրա,

3. ֆինանսական շուկայում կրիպտոարժույթի շրջանառության վերլուծությունների հիման վրա առաջարկվել է տնտեսության կրիպտոլիզացիայի վերահսկողության մոտեցում՝ ընդլայնելով փողի զանգվածի բնութագրման որակական ցուցիչները և էլեկտրոնային փողերի շրջանառության արդյունավետության գնահատումները,

4. Էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների արդյունքների գնահատումներով առաջարկվել է էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության վարկանշավորման համակարգ, վերահսկողության նպատակով վճարահաշվարկային գործունեության հաշվետվողականությունն օգտագործելով նաև որպես մոտիվացիոն գործիք:

Հետազոտության առավելություններից է այն, որ ստացված արդյունքներն ունեն գործնական նշանակություն՝ դրանք հանգեցվել են կոնկրետ առաջարկությունների և եզրակացությունների, հետևաբար աշխատանքում մշակված մոտեցումները, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն տեսական և գործնական նշանակություն:

Հետազոտության գիտական արդյունքների հավաստիությունը և գործնական նշանակությունը

Գրախոսվող ատենախոսությունն իրենից ներկայացնում է էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների շրջանառության ֆինանսական կառավարման մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների վրա կատարված համալիր հետազոտություն: Աշխատանքը ներառում է հիմնարար առաջարկություններ, որոնք ուղղված են ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգում վերահսկողական և կազմակերպական գործառույթների բարելավմանը:

Մեր կարծիքով, ատենախոսի ստացած գիտական արդյունքները, կատարված մի շարք առաջարկությունները, էլեկտրոնային վճարումներում ռիսկի գնահատման ներկայացված մեթոդները հաջողությամբ կարող են գործնական կիրառում ստանալ ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգում, միաժամանակ նպաստելով ֆինանսական ինսիտուտներում, մասնավորապես առևտրային բանկերում, վճարահաշվարկային գործառույթների ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Գրախոսվող ատենախոսության կարևոր առավելություններից մեկն էլ այն է, որ ստացված արդյունքները չեն կրկնում այլ հետազոտողների կողմից ստացված արդյունքները:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Ներածությունում ներկայացվել են հետազոտության թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական արդյունքներն ու նորույթը, արդյունքների գործնական նշանակությունը, փորձարկումն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին ***«Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի էվոլյուցիան և արդի մարտահրավերները»*** գլխում քննարկվում են էլեկտրոնային վճարային համակարգերի գործունեությունը և կառուցվածքային առանձնահատկու-թյունները:

Վճարային գործիքակազմի էվոլոյուցիան փողի վերափոխումների և դրանց նյութական ու ոչ նյության կրիչների, ինչպես նաև վճարահաշվարկային միջավայրի փոխակերպումների հետ է պայմանավորված: Այս համախմբում առանցքային է համարվում ոչ թէ կրիչը, որը ներկայանում է որպես վճարման գործիքի ձև, այլ վճարահաշվարկային միջավայրը, որը վճարային գործիքների բովանդակային մասն է ապահովվում: Այս առումով էլեկտրոնային վճարային գործիքների էվոլյուցիան սերտ առնչությունը ներկայացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և վճարային միջավայրի վիրտուալիզացիայի հետ:

Ատենախոսության երկրորդ ***«Կրիպտոարժույթների շուկայի ֆինանսական կառավարման հիմնախնդիրները»*** գլխում վերլուծվում է կրիպտոարժույթների թողարկման և շրջանառության կարգավորման հիմնախնդիրների շրջանակը:

Կրիպտոարժույթները ձևավորվեցին թվային տնտեսության, էլեկտրոնային գաղտնագրության և օգտատերերի պահանջմունքների փոփոխության հատույթում: Եվ դա է պատճառը, որ կիրպտոարժույթների կիրառման կարգավորումները ապակենտրոնացվեցին և մեկնարկեցին ոչ թե վերևից պետության կողմից, այլև ներքևից՝ կրիպտոանձերի համայնքի կողմից:

Ընդհանուր առմամբ, կրիպտոարժույթների «ինտերվենցիան» ավանդական փողերի շրջանառության ոլորտ պետք սահմանափակ լինի, քանի որ կրիպտոանձերի կողմից այդ արժույթի «ներքևից» ապակենտրոնացված կառավարումը կրում է բազում ռիսկեր, որոնք զանգվածային ներթափանցումը կենտրոնացված կառավարվող փողի զանգված, կարող է առաջացնել դրամավարկային էկոհամակարգի խաթարման ռիսկեր՝ կրիպտոարժույթների գնային կտրուկ տատանումների, կիբեռանվտանգության խաթարումների, անկառավարելի մայնինգի պատճառներով: Ուստի առաջարկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանելու փողի զանգվածի թույլատրելի

կրիպտոլիզացիայի աստիճան և դրանով իսկ սահմանափակումների գործիքակազմ կիառել:

Ատենախոսության երրորդ ***«Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի ֆինանսական կառավարման հայեցակարգային մոտեցումները»*** գլխում քննարկվում են ռիսկերի կառավարման հիմնախնդիրները էլեկտրոնային վճարահաշվարկային գործարքներում: Էլեկտրոնային վճարահաշվարկային գործարքների ռիսկերը առաջարկվում է խմբավորել չորս ուղղություններով, ինչպիսիք են ֆինանսականը, գործառնականը, կիբեռանվտանգությունը և համակարգայինը, որոնք շղթայապես փոխկապակցված են և ներազդում են միմյանց: Հաշվի առնելով էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեությանն առնչվող ռիսկերը, ատենախոսն առաջարկել է ռիսկերի բազմագործոնային գնահատման մոտեցում, հիմնված նպատակադրումների և դրանցից բխող բացասական շեղումների վրա:

Հետադարձ կապով շահառուներից էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների արդյունքների գնահատման հիման առաջարկվում է կազմել վարկանիշային աղյուսակներ, որոնք կլրացնեն Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող հաշվետվությունները և մաս կկազմեն հաշվետվական գործընթացի: Կարևորվում է, թե ինչպես է արձագանքում մրցակցային շուկան վճարահաշվարկային գործունեություն ծավալող կազմակերպությունների աշխատանքի որակին, որը բնավ չի արտացոլվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրատարակված հաշվետվություններում:

Եզրակացություններ բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են վերլուծությամբ հիմնավորված առաջարկություններ:

Ատենախոսության օգտագործված գրականության ցանկ բաժինը ներառում է 73 անուն գրականության աղբյուրներ:

Հավելվածներ բաժնում բերված են հաշվարկային տվյալներ, ներառում է 111-113 էջերը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները.

1. Ատենախոսությունում հեղինակի կողմից որպես գիտական նորույթ ներկայացված հետևյալ դրույթը՝ <<…ֆինանսական շուկայում կրիպտոարժույթի շրջանառության վերլուծությունների հիման վրա առաջարկվել է տնտեսության կրիպտոլիզացիայի վերահսկողության մոտեցում՝ ընդլայնելով փողի զանգվածի բնութագրման որակական ցուցիչները և էլեկտրոնային փողերի շրջանառության արդյունավետության գնահատումները: …>> տեսական մեթոդաբանական առումով կարևոր առաջարկություն է, սակայն կարծում ենք, որ այն որոշակի հաշվարկներով ճշգրտման կարիք ուներ:
2. Ատենախոսությունում հեղինակի կողմից որպես գիտական նորույթ ներկայացված էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության վարկանշավորման համակարգը տեսագործանական առումով ֆինանսական կազմակերությունների գծով շահառուների սպասումների բավարարվածության դասակարգման տեսանկյունից նոր լուծում է; Սակայն, վերջինիս գործնական մասը ցանկալի էր լրացնել կոնկրետ հաշվարկներով ևս:
3. Ատենախոսությունում գրեթե բացակայում են Հայաստանի Հանրապետությունում կրիպտոարժույթների շրջանառության, առքուվաճառքի տվյալներ և դրանց առնչվող վերլուծություններ, այն դեպքում, որ այս ուղղությամբ հեղինակը ներկայացրել է միջազգային հարուստ փորձ: Կարծում ենք, որ ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը կատարեր ՀՀ-ում ներկա փուլում ձևավորված կրիպտոարժույթների շուկայի վերլուծություն և կատարեր համապատասխան որակական եզրահանգումներ, դրանք համադրելով միջազգային փորձի հետ:

4. Ատենախոսությունում վերլուծության է ենթարկվում կրիպտոարժույթների օգտագործման իրավական կարգավարման ժամանակագրությունն ու միջազգային փորձը, որը սահմանափակվում է 2017 թվականի տվյալներով: Սակայն վերջին տարիների, միջազգային ֆինանսական հանրությունը կարգավորման լրացուցիչ գործիքներ է առաջարկում, որոնք տեղ չեն գտել ատենախոսությունում:

5. Մեր կարծիքով, ատենախոսությունում պետք է իր հստակ գնահատականը ստանար էլեկտրոնային վճարումների փոփոխության դինամիկան և դրա հետ կապված գնահատումները COVID -19 համավարակի պայմաններում, երբ առցանց վճարումներն ու դրամական փոխանցումները ֆինանսական շուկայում աննախադեպ աճեցին: Սակայն, ատենախոսությունում նման ուղղվածության ուսումնասիրություններ, վերլուծություններ և գանահատականներ բացակայում են:

6. Ատենախոսության 2.3 ենթահացրում փորձ է արվում ներկայացնելու կրիպտորաժույթների շրջանառության էկոհամակարգի ֆինանսական կառավարման էկոհամակարգը (գծապատկեր 2.3.1): Սակայն կարծում ենք, որ այս ուղղությամբ հեղինակի դատողությունները դեռևս հպանցիկ են և կրիպտոարժույթների շրջանառության էկոհամակարգի վերլուծությունները առավել հստակեցման և խորքային վերլուծությունների կարիք ունեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները բնավ չեն նվազեցնում հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Հրաչյա Դանիելյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում դրված նպատակը և խնդիրների լուծումը ներկա փուլում խիստ կարևոր են ու արդիական:

Հետազոտության հիմնական արդյունքները հրատարակվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական վեց հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը

համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները։

Ատենախոսը դրսևորել է բարձր մասնագիտական գիտելիքներ և վերլուծական ընդունակություններ, ինչի մասին վկայում է ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները, իսկ մշակված առաջարկություններն ու կատարված եզրահանգումներն ունեն նաև տեսական և գործնական կիրառական նշանակություն։

Հրաչյա Արսենի Դանիելյանի «Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությանը, բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ։

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՊՏՀ «Ֆինանսներ» ամբիոնի պրոֆեսոր,
տնտեսագիտության դոկտոր Աշոտ Վարազդատի Մաթևոսյան

Պրոֆեսոր Աշոտ Վարազդատի Մաթևոսյանի
ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար Ն.Հ.Դարբինյան
Ք. Երևան
21.08.2022 թ.